

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԶԵՎԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԻՐԱՑՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԸՍՏ ԱՌՕՐՅԱ ԿԵՆՑԱՂԱԿԱՐԳԻ*

Էդիտա Ալբունյան

Բանալի բառեր Ղարաբաղի բարբառ, ժամանականշություն, առօրյա կենցաղա-
կարգ, ժողովրդական լեզվամտածողություն, ավանդական ընկալում:

Ժամանակի հաշվարկման համար հիմք են ծառայել կենսական-առօրեական այն-
պիսի դեպքեր, իրադարձություններ ու երևույթներ, որոնք մեր նախնիներն ընկալում
էին որպես կենցաղակարգ, սովորույթ: Ժամանակի հոլովություն ծիսական նշանակու-
թյուն ստացած կենցաղակարգն ու սովորույթները դարձան նաև ժամանականիշ միա-
վորներ՝ դառնալով տվյալ ծեսի իրականացման հետ կապված կոնկրետ ժամանակի
հասցե: Ժողովրդական մտածողության մեջ այսօր էլ շարունակվում են պահպանվել
ժամանականշության ավանդական ընկալման ձևերը: Ամենօրյա առտնին գործերը
գրեթե միշտ նույն ժամին կատարելով՝ մարդիկ դրանց միջոցով մոտավորությամբ կա-
րողացել են ժամանակի մեջ կողմնորոշվել: Տրական հոլովածով ժամանակի հետ
կապ չունեցող բառերով խոսքում ժամանակի պարագա ձևավորելու իրողությունը հա-
յերենի բարբառներում համատարած է[1]: Ղարաբաղի բարբառում ևս ժամանակի
մակբայի արժեք ունեցող այդպիսի արտահայտություններ կան, որոնք ժամանական-
շության արժեք են ձեռք բերում՝ ստանալով հոլովական վերջավորություններ: Դրան-
ցից են **կընունքէն/կընունքավը, կըլխըլվէն/կըլխըլվավը, հըրսընքէն/հըրսընքավը, նը-
շընտըրիքին/նըշընտըրիքավը, փըսըկանչէն/փըսըկանչավը, փըսըխումէն/փըսըխումա-
վը** և այլն [2]: Ընտանեկան իրադարձությունների հետ կապվելով՝ նշված բառերը ժո-
ղովրդական լեզվամտածողության մեջ դարձել են որոշակի ժամանակահատված
մատնանշող արտահայտություններ: Ժամանակ կամ ժամանակահատված մատնան-
շելու համար այս կարգի բառերի ու արտահայտությունների հետ հաճախ գործ են ած-
վում **վախտ** ժամանականիշ բառամիավորը, ինչպես նաև՝ ժամանակահատվածը որոշ
չափով կոնկրետացնող կապեր ու կապական բառեր: **Նըշընտըրիքին վախտը** թաքա-
վելին տըղան էտ ըխճըկանը մին մըտանիյա ինըմ տըված: [3]// **Հըրսընքանը յըէտը**
թ³գ³ խընամէն յէկու կըլխըլվա: [4]// **Կընունքավը** լօխճին ծէն ա տուվալ:

Կնունքից հետո կազմակերպվող ճաշկերույթը կամ խնջույթը Ղարաբաղի բարբա-
ռում դարձել է ժամանակը հիշատակելու միջոց: Այսպես՝ Ըտըրանք խըռավըն ինձօմ,
ըտըրա հըէտէ էլ Կափին տըղէն **կընունքըհացավը** հիորըվանէն ծէն չի տամ: [5]

Ինչպես շատ բարբառներում, այնպես էլ Ղարաբաղի բարբառում օրվա երեք պա-
հերին (առավոտ, կեսօր, իրիկնապահ) սեղան նստելու հանգամանքը դարձել է այդ
պահերը նշող ժամանակային միավոր: Պարբերաբար կրկնվող առօրյա այս կենցաղա-
կարգը դարձել է ժամանակի մեջ կողմնորոշվելու ամենարնկալելի միջոցը:

Այսպես՝ բարբառի տարբեր խոսվածքներում կիրառվող **հըցավախտ** բառն ունի
ճաշելու ժամանակ ընդհանուր իմաստը. **Հըցավախտը** վէր կամ ա, հմնձ ընօղնէն
հըվաքվում ըն: [6]

* Հոդվածն ընդունվել է 15.10.21:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.թ., դոցենտ Ա. Սարգսյանը: 22.10.21:

Առավել մասնավոր իմաստ ունեն **քըշընահաց** կամ **ըռութընահաց / ուռութունահաց / ուռթընահաց, քըսուրահաց / քըսուրահաց, ըրուգունահաց / ուրուգունահաց** կամ **քըշըրահաց** բառերը, որոնք ամենադիպուկ ձևով մատնանշում են օրվա սկիզբը, օրվա կեսը և օրավարտը: Վերոհիշյալ բառերը, սակայն, ոչ թե կոնկրետ ժամանուներ են, այլ օրվա որոշակի ժամանակահատվածի հետ աղերսվող բառանվանումներ, ավելի կոնկրետ՝ պարբերաբար կրկնվող երևույթի անվանումը դարձել է նաև դրա կատարման ժամանակի անվանում:

Էտ մարդը **ըռութընահացը** վեր սըքսում ա, էրկու սըհաթ քաշած ա: [7]//**Քըսուրահացը** վեր ըսքըսում ըն, թօռը նիյա օնում: [8]//**Ըրուգունահացը** վեր սըքսում ըն, էտ մարթը նիյա մըննում, **Ըրուգունըհացէն** սաղ շինճուց ծէն ա տամ, ըտըրանա կըման: [9]//**Քըշըրահացը** պըրծընում ըն, քօն ինում: [10]

Ժողովրդական լեզվամտածողության մեջ ժամանակի ամրակայման ավանդական միավորների արժեք ունեն **ճ՜շթօղ / ճաշթօղ, ճ՜շքօն / ճաշքօն, քըսուրաթօղ / քըսուրաթօղ** բառամիավորները, որոնք ևս կրկնվող կենսակարգերի հիման վրա նպաստում են ժամանակը ճշտելուն: Այսպես՝ **ճ՜շթօղ / ճաշթօղ** բառամիավորն ունի ճաշելու համար սահմանված ընդմիջում, ինչպես նաև ճաշելու ժամանակ, կեսօր իմաստները, այսինքն՝ մի կողմից մատնանշում է երևույթ, որը կրկնվում է ամեն օր՝ օրվա որոշակի պահի, մյուս կողմից՝ ունի օրվա կոնկրետ ժամանակահատված նշանակությունը, ինչն էլ թույլ է տալիս նշված բառամիավորը կիրառել ժամանականիշի արժեքով: **Ճ՜շթօղէն վախտը** հմնծ ընօղէն հըվաքվում ըն ըղպիրին կօխկէն: // **Ճ՜շթօղըն** անում, էլիա հմնծը ըսքըսում:

Ճ՜շքօն / ճաշքօն բառն ունի հետճաշյա քուն, ճաշելուց հետո քնելը նշանակությունը՝ **Ճ՜շքօնէն վախտը** ըտըրանց անա մինը թաքուն նիյա մընում ախօռը, ծիյը՛նը պէց թօղում: [11]

Ավանդական ընկալմամբ ժամանականշություն է արտահայտում նաև **քըսուրաթօղ / քըսուրաթօղ** բառամիավորը՝ կեսօրին հանգստանալը և ճաշելը նշանակությամբ:

Քըսուրաթօղէն վախտը ծըռէրէն տակէն պարանց ըն ըղնում, դինջանում: [12]

Վաղնջական ժամանակներում մարդիկ օրվա ժամերը մոտավորությամբ որոշում էին նաև կենդանիների վարքի, բույսերի առանձնահատկությունների վրա հենվելով: Հնուց ի վեր աքաղաղի առաջին և երկրորդ կանչերն օրվա սկիզբն ազդարարող և կենցաղային, առտնին աշխատանքները կարգավորող ժամանակաչափի դեր են կատարել՝ խորհրդանշելով գիշերավարտն ու լուսաբացը [13]: Ղարաբաղի բարբառում աքաղաղի առաջին կանչի պահը բառայնորեն դրսևորվել է **վըրցըկկանչին** ձևով:

Այան **վըրցըկկանչին** յըէր ա կէնում, խըմօրը հունցում:

Երեկոյան ժամերին պարբերաբար կրկնվող կենցաղակարգի մաս է կազմում ճրագները վառելը: Հետաքրքրական է, որ բարբառում **ճըրըքլուսին** բառն իր բնիմաստով է՝ պահպանվել՝ ճրագալույցին՝ ճրագները վառելու ժամին, և թյուրմբռնման հիմունքով գրականհայերենյան իմաստափոխված տարբերակով գործածության չենք հանդիպել: Թեպետ վերջինիս իմաստափոխությունը հասցեավորվում է ժողովրդախոսակցական տարբերակին, բայց և այնպես բարբառում բառն իր ելակետային իմաստն է պահպանել: Այսպիսի Ղարաբաղի բարբառում դրսևորվել է **ճըրըքլուսին** ձևով և դարձել է ժամանականշության ավանդական արտահայտություն: Նըստըն ա, մին պուճուր ճըվարան կմծըն, մօշալ լըցընը, յէզնը առաչըն անըն, **ճըրըքլուսին** կամ տօն: [14]

Անասնապահությամբ զբաղվող տարածքներում նույնպես որոշակի ժամանակահատված մատնանշող ձևեր կան: Ղրանցից է **տըվըրվը՛նէն** բառամիավորը, որն ավանդական ընկալմամբ բարբառում **երեկո** իմաստն է արտահայտում:

Անասնապահական տարբեր աշխատանքների իրականացման ժամանակահատվածն ամրակայվում է ժողովրդի հիշողության մեջ, ինչի արդյունքում էլ ստեղծվում են ժամանականիշ նոր բառեր ու բառակապակցություններ: Ժողովրդական լեզվամտածողության արտահայտություն են **ինքննարոտ / իքննարոտ / ինքննարոտ, լրպղզտան, խըմըհանէք, նըխըրաթօղ / նըխրաթօղ** բառամիավորները:

Ինքննարոտ / իքննարոտ / ինքննարոտ բառն ունի վաղ առավոտյան անասուններին կարճ ժամանակով արոտավայր տանել-բերելը՝ կթելու համար նշանակությունը. - Հիյվընէն տանում ա **ինքննարոտ**, տըէսնում մին աղվէս վէր ընգած: [15]

Լրպղզտան-ը մարտ-ապրիլ ամիսների շրջանն է, երբ անասունները, առատորեն կանաչ խոտ արածելով, փորլուծով հիվանդանում են. **Լրպղզտանէն վախտը** հիյվընուն չմը խօտ ըն տամ: [16]

Խըմըհանէք-ը այն ժամանակահատվածն է, երբ ծմեռվա հանգստից հետո անասուններին թեթև աշխատանքի են լծում. **Խըմըհանէքին վախտը** հունց ա պըտահում սըէվ յը՛գնը վէր ա ըղնում, վըէննը կօտրում: [17]

Եվ վերջապես **նըխըրաթօղ / նըխրաթօղ**-ը աշնան այն ժամանակահատվածն է, երբ նախիրն այլևս չեն հավաքում արոտ տանելու համար, այլ անասուններին ազատ են արձակում. **Նըխըրաթօղը** նօյէմբերըմըն ա ինում: [18]

Որոշակի ժամանակահատված է մատնանշում նաև **խըղըլաթախ** բառը՝ եղանակային փոխհաջորդումների հետ կապված (ամառ-աշուն) բնության մեջ և ընտանի թռչունների հետ կատարվող փոփոխություններով պայմանավորված: Ունի 1. Աշնանը ծառերի տերևները թափվելը, աշնանային տերևաթափ և 2. Փետուրները թափվելը (թռչունների մասին) իմաստները, ինչպես՝ **Ջըկըռը խըղըլաթախը** յը՛տնա հըսնում: Ամը՛ռընը վէր կամ ա, հըվէրէն **խըղըլաթախը** ըսքըսում ա:

Այս բառերի ու արտահայտությունների գործածությամբ, ինչպես տեսնում ենք, հասկացվում է տարվա որևէ եղանակ կամ որևէ ամիս՝ առանց դրանց անունների հիշատակության:

Առօրյա կենցաղակարգին, հետևաբար նաև ժամանականշությանն են առնչվում թաղման ծեսերն ու դրանք անվանող բառամիավորները: Կրկնվելով միշտ նույն հաջորդականությամբ՝ մարդու մահից հետո կատարվելիք ծեսերն ու արարողությունները ժամանակի ամրակայման ավանդական ծն են դարձել ժողովրդի գիտակցության մեջ: Լ. Հովհաննիսյանը նշում է. «Մահ հասկացության ընկալումը, նրա գիտական ու զգայական իմաստավորումը, հետևաբար և լեզվական արտահայտությունը նույնական չեն տարբեր հանրությունների լեզվամտածողության մեջ» [19]: Այս առումով բացառություն չէ նաև Ղարաբաղի բարբառը:

Թաղման ծիսակատարության առաջին խորհուրդը հուղարկավորությունն է, որի ընթացքում մահացածին հողին են հանձնում: Ղարաբաղի բարբառում այն **թաղէլ** բառով է առկայանում, ինչպես՝ Էն կօղը կացած տըղան մէյդը **թաղում ա**, քին՝ թաքավը՛րէն կօշտը: [20]

Բարբառում ժամանականշության արժեք է ծեռք բերել **մըռըլահաց/մըռահաց** բառը, որ իմաստով համարժեք է **բաղար՝ք/բաղարաք/պաղար՝ք** բառին: Այն ունի ննջեցյալի հիշատակին, թաղումից անմիջապես հետո հարազատների կողմից տրվող ծիսային ճաշկերույթ՝ հոգեհաց իմաստը. Մէլիքին հօրը **բաղարաքավը** Պուղին նի յա մընէս, թա.- Մէլիքն ապրած կէնա, յը՛կալ ըմ ցօրէնըս տանիմ:

Թաղման ծիսակատարության հաջորդ խորհուրդն **ինքնահողն** է: Ըստ Էդ. Աղայանի՝ **ինքնահող** բառն առաջացել է իմաստափոխության ճանապարհով: Գրաբարյան **այգողք** բառը կազմվել է **այգ** «ուսաբաց» բառից և նշանակել է «հանգուցյալի շիրիմին թաղման հաջորդ օրն այցի գնալն ու սգալը»: Քանի որ **այգ** բառը բարբառներում չի պահպանվել, ապա **այգողքը** կապվել է **ինքը** բառի հետ, իսկ **ողք** բաղադրիչից մնացած մասն էլ՝ **հող** բառի հետ և ստացվել է **ինքնահող**, իբր թե «իր հողին այցելելը» [21]:

Ղարաբաղի բարբառում **ինքնահող** բառը ներկայանում է **ինքնավճիղ//իքնավճիղ//ինքնավճիղ** հնչյունական-արտասանական տարբերակներով, թաղման հաջորդ օրը ննջեցյալի գերեզմանին այցի գնալը և նրա հետ կապված արարողությունները նշանակությամբ: Ժամանականշարժում է արտահայտում և՛ **ինքնին**՝ հոլովված ծնով, և՛ վախտ բառի զուգորդությամբ. **ինքնավճիղեն վախտը** էտ կընէճը էլիա հաճճն քինճա:

Թաղումից հետո՝ որպես հիշատակության օր, ընդունված է նշել նաև 7-րդ օրը, որի խորհուրդը սահմանվել է եկեղեցու կողմից, ըստ որի՝ հանգուցյալի մարմինն այդ օրն իր վերջնական հանգստությունն է գտնում հողում: Ղարաբաղի բարբառում այն **օխնը** հնչատարբերակն ունի՝ կապված յոթ թվականի բարբառային արտասանության հետ: Ունի ննջեցյալի մահվան յոթերորդ օրը նրա շիրիմին այցի գնալը և նրա հիշատակին հացկերույթ կազմակերպելը բացատրությունը. Բուղդան դայուն **օխնավը** շատ մարթ ար յը՛կալ:

Թաղման ծիսակատարության խորհուրդները է **քառասունքը**: Այս օրը մարդիկ այցելում են հանգուցյալների շիրիմներին, կատարում հատուկ կարգ: Բարբառում այն **քռաասունք** հնչատարբերակն ունի՝ ննջեցյալի մահվան քառասուներորդ օրը նրա շիրիմին այցի գնալը և նրա հիշատակին հացկերույթ կազմակերպելը, որից հետո հարազատները սգից հանվում են բացատրությամբ. <Օրը **քռաասունքավը** Կամօն հէնճ վը՛խ-ճար ա մօթթալ:

Հայ ժողովուրդը հնուց ի վեր նշում է նաև հանգուցյալի **մահվան տարելիցը**, որ Ղարաբաղի բարբառում **տարէ//տարի//տարը՛** հնչական-արտասանական տերբերակներով է առկայանում և ժամանականշարժում է արտահայտում հոլովական վերջավորություններ ստանալով. <Օրը **տարավը** Մուքայիլը էրկու Յը՛ռ ա մօթթում, ժողովուրթէն լ՛ավ հաց տամ:

Արցախցու լեզվամտածողության մեջ կենցաղակարգի ու ծիսակարգի հիմքով ամրակայված ժամանականիշ միավորների քննությամբ ճանաչելի է դառնում ոչ միայն արցախցու կենսաձևը, այլև՝ այն կարգավորելու արցախյան ընկալումը: Յուրաքանչ-յուր բառամիավոր դառնում է արցախցու կենսապատումի խճանկարն ամբողջացնող բաղադրիչ և տեղեկույթի պահոց:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բառնապյան Զ., Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Երևան, 2009, էջ 81:
2. Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 343-772:
3. Հայ ժողովրդական հեքիաթներ (գրի է առել Մ. Մ. Գրիգորյան-Սպանդարյանը), հատոր V, Երևան, 1966, էջ 588:
4. Սարգսյան Ա., նշվ. աշխ., էջ 343:
5. Նույն տեղում, էջ 359:
6. Նույն տեղում, էջ 436:
7. Նույն տեղում, էջ 172:
8. Նույն տեղում, էջ 812:
9. Նույն տեղում, էջ 181:
10. Նույն տեղում, էջ 800:
11. Նույն տեղում, էջ 463:
12. Նույն տեղում, էջ 812:
13. Բառնապյան Զ., նշված աշխատությունը, էջ 82:
14. Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրի է առել Մ. Մ. Գրիգորյան-Սպանդարյանը), Երևան, 1971, էջ 297:

15. Սարգսյան Ա., նշվ. աշխ., էջ 227:
16. Նույն տեղում, էջ 244:
17. Նույն տեղում, էջ 175:
18. Նույն տեղում, էջ 555:
19. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, մաս 1, Երևան 2008, էջ 81:
20. Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից (կազմողներ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան), Երևան, 1978, էջ 52:
21. Զահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, մաս 1, Ապրակ, Երևան, 1980, էջ 258:

ԱՄՓՈԹԱԳԻՐ

Ժամանակի ամրակայման ձևերի բառային իրացումը Ղարաբաղի բարբառում՝ ըստ առօրյա կենցաղակարգի Էդիտա Ալթունյան

Ժամանակի հաշվարկման համար հիմք են ծառայել կենսական առօրեական այն-պիսի դեպքեր, իրադարձություններ ու երևույթներ, որոնք մեր նախնիներն ընկալում էին որպես կենցաղակարգ, սովորույթ: Ժամանակի հոլովություն ծիսական նշանակություն ստացած կենցաղակարգն ու սովորույթները դարձան նաև ժամանականիշ միավորներ՝ դառնալով տվյալ ծեսի իրականացման հետ կապված կոնկրետ ժամանակի հասցե: Ժողովրդական մտածողության մեջ այսօր էլ շարունակվում են պահպանվել ժամանականշության ավանդական ընկալման ձևերը: Ամենօրյա առտնին գործերը գրեթե միշտ նույն ժամին կատարելով՝ մարդիկ դրանց միջոցով մոտավորությամբ կարողացել են ժամանակի մեջ կողմնորոշվել: Վաղնջական ժամանակներում մարդիկ օրվա ժամերը մոտավորությամբ որոշում էին նաև կենդանիների վարքի, բույսերի առանձնահատկությունների վրա հենվելով: Արցախցու լեզվամտածողության մեջ կենցաղակարգի ու ծիսակարգի հիմքով ամրակայված ժամանականիշ միավորները կարևոր են թե՛ արցախյան կենցաղակարգը ձանաչելու, թե՛ դրանց ընկալման առանձնահատկությունները բացահայտելու տեսանկյունից:

РЕЗЮМЕ

Лингвистическая реализация форм временного усиления на карабахском диалекте по повседневной системе

Эдита Алтунян

Ключевые слова: Карабахский диалект, повседневный образ жизни, обстоятельственное местоименное времени, языковое мышление народа, традиционное восприятие.

Повседневные жизненные события и явления, воспринимаемые нашими предками как образ жизни и традиции, служили основой расчета времени. Образ жизни и традиции, получившие обрядовое значение в эволюции времени, становились единицами расчета, превращаясь в связанный с проведением данного обряда точный временной адрес. В народном мышлении и по сей день сохранились формы традиционного восприятия времени. Выполняя свои обязательные повседневные дела в одно и то же время, люди научились приблизительно ориентироваться во времени. В древние времена люди ориентировались во времени, опираясь на повадки животных и особенности растений.

Фиксированные в языковом мышлении арцахцев единицы времени, основанные на жизненных и обрядовых ритуалах, очень важны как для ознакомления с укладом жизни арцахцев, так и для объяснения особенностей их восприятия.

SUMMARY

Verbal Realization of the Strengthening Forms of Time in Karabakh Dialect According to Daily Lifestyle
EditaAltunyan

Key words: Karabakh dialect, time destination, daily life style, folk language thinking, traditional perception.

Certain daily vital occasions, events and phenomena which had been considered as living standards and customs by our ancestors have become the basis for time calculations. These living standards and customs, which had become rituals as time went on, had also become time units thus being considered time destinations related to the implementation of rituals. The ways of traditional perceptions of time destinations continue to be currently used in the folk thinking. Doing the same everyday household duties on the same time people could approximately orientate within the time through those time units. In ancient times people approximately determined the hours of the days taking into account animal behaviour and characteristics of plants.

Time units are important regarding both the recognition of the Artsakhi life style and the revealing of the features of its perception fixed in Artsakhi linguaculture by means of life style and rituals.